



13. ՏԱՆ ԴՈԼՎԱԹԸ

Մեկ մարդ կըլի ժամանակով, շատ հարուստ կըլի. ըդրա տղեքը՝ աղբրտանքը տան մեջը դալմադալ արին, իրար շսեցին. քյասիպութունը հաղթեց, ցրվան, ամենը մի տեղ նոքար էլան. Ընդրանց տան մեծն էլ գլուխն առավ ու դնաց, մի գեղի մեջ մտավ, էլավ ջաղացպան: Ըդրա ջաղացները թարս բանեցին:

Ջաղացատերը էկավ, ասեց.— Իմ ջաղացները շարի հըմի շիտակ րանըմ ին, հըմի դու էկար, խարաք արիր:— Դուս արեց ըդրան, նոր ջաղացները ջտկվեցին:

էս մարդը դնաց էլավ բաղվանչի. էկավ պտղի վախտը, բարը բիրատի թափավ:

Բաղի տերը էկավ, ասեց.— Դու ի՞նչ մարդ ես, ոտդ կոտրվեր, չգալիր, իմ տունն էլ, քու տունն էլ քանդեցիր:— Բռնեց, դուս արեց, հախ էլ շտվեց:

Աշուն էկավ. ո՛րտի մտնում էր, նոքար շէին բռնում, ասում ին. «Դու էն մարդն ես, ջաղացը գնացիր՝ խեր շտվիր, բաղը գնացիր՝ խեր շտվիր»: Շատ պտըտեց, մի հալիվոր մարդ տեհավ. ընկավ ընդրա աղաքը, ասեց.

— էս ձմեռ փոր հացի ինձ պահա, ձմեռ ա, չեմ կարում տեղ էթամ:

էն մարդը վեկալավ, տարավ իրա տունը, ասեց.

— Էս տավարը պահա շարի զատիկ, քե փող էլ կտամ, դու մեղք ես:

Իրեք ամիս ըդրա տավարը պահեց, մտավ մեծ պասը: Ըդրան մի քած ունևր, ծնում էր, ասեց.

— Զքնե՛ս, էս զջեր քածին մուղաթ կաց, ծնելու վախտը քածը շհեղդի:

Մուղաթ կացավ, բիրտան քունը տարել էր, զարթնեց, տեհավ՝ քածը ծնել ա, մի հալիվոր մարդ կշտին կաղնել ա, ձագին ծրծացնում ա:

Ասեց.— Վա՛յ, քունս տարել ա, աղես էկել ա, ձագին ծրծացնում ա. հըմի ինձ հետ կկուլի:

— Գնաց, տեհավ իրա աղեն շի, ասեց.

— Պապի՛, դու ի՞նչ մարդ ես:

Ասեց.— Դու ինձ շես ճանաշի, ես որ շհասնեի՝ աղեն քեզ հետ կկուվեր, քեզ էլ ղուս կաներ: Ծս իրանց տավարը, իրանց ամեն բանը ինչ նեղ տեղ ըլի, կհասնեմ, ամենայն փորձանքից կազատեմ, ես էս տան դուվաթն եմ:

Ասեց.— Պապի՛, վիրև աստված, ներքև դու, ես էլ եմ հարուստ մարդ էլի. հըմի քյասիպացել եմ, էս օրն եմ ընկե, որտե էթում եմ՝ իմ բանը շի հաշողում, իմ տունն էլ ա դուվաթ էլի, հալպաթ խոռվել ա, գնացել ա, հըմի դու տեղը գիտաս, ինձ տեղն ասա. ես էթամ, բերեմ:

Ասեց.— Քու դուվաթը խոռվել ա, գնացել ա Ալագյազու սարը. մտել ա, ձորի մեջը դաղա կա, զաղի մեջը պառկել ա. քրքի վրեն մի թիզ թող ա գրե. էթաս, էն թողը թափ տաս. կընկնես աղաչանք, կասես. «Վե՛ր, էթա՛նք»: Ինչդտար որ կբարկանա, կթքի, կմըրի քեղ, դու աղաչանք կընկնես. ինչ որ կտա քեղ, շես ասի. «Քիչ ա», կընկնես ճանապար, կդաս: Հալիվոր ասեց, էլ շէրևաց:

Ինքը գնաց, պառկավ իրա տեղին. լիսը բացվեց, աղեն էկավ, մտավ գոմը, ասեց.

— Ա՛յ որդի, քածը ծնե՞լ ա:

Ասեց.— Մնել ա:

Գնաց, տեհավ, ասեց.— Զորանա՛ս:

Հանեց շեպիցը մի մանեթ փող բախշեց:— Ասեց.— Աղա՛, ես պրտի էթամ, քեզանից շնորհակալ եմ:

— Որդի՛,— ասեց,— մի՛ էթա, կա՛ց, զատկից ետը գնա:

— Շնորհակալ եմ,— ասեց,— ինձ ճանապար քցա՛:

Հանեց հինգ մանեթ փող տվեց, հագցրեց, մի խուրճին էլ հայ տվեց, քցեց թևը, ասեց.

— Բարի ճանապար ըլլի, գնա՛:

էդ մարգը վե կացավ, Ալագյազու սարը դեմ արեց աղաքը. գնաց: Հասավ սարին, մտավ ձորի մեջը, ընկավ զաղեքը ման գալու՝ գնաց էս դաղեն, էն զաղեն: Գնաց մեկ զաղա էլ տեհավ, հրե՛ս էն զաղի մեջ պառկած ա, մոտեցավ, արևն էլ մտավ:

Գնաց, տեհավ քրքի վրա մի թիզ ֆող ա դրե, ֆողը թափ տվեց. դոլվաթը զարթնեց, թամաշա արեց էրեսին, ասեց.

— Դե՛, կորի, լի՛րբ, անճախ ձեր էրեսից փախել եմ, պրծե, էլ էկար, գթար:

Ասեց.— Պապի՛, վերև աստված, ներքև դու, պըտի գաս, էթանք: Անկարելի ա, քեզ պըտի տանեմ:

Ասեց.— Շատ մի խոսա, մութն ա, պառկի, քնի, առավոտը վեր կաց, գնա՛:— Պառկեց, քնեց. լիսը բացվեց: էլ ընկավ աղաչանք.— Քեզ պըտի տանեմ,— ասեց:

Ասեց.— էլ չեմ դա, ձեր դալմաղալից, ձեր ուշունցիցը անճախանճախ պրծել եմ. հըմի մոնց որ էկել ես, դրվորն էկել ես, էլի դենը գնա:

Ասեց.— Իլաճ չկա, քե պըտի տանեմ, սոված կոտորվանք մենք, մեղա կգանք, էլ չենք անի:

Ասեց.— Որ շատ աղաչըմ ես, ա՛ն էս էրկու պոպոկն ու գնա, ես կգամ:

Հենց առավ ու էկավ: էկավ մի գեղի ղրաղը դուս էկավ: Տեհավ՝ էրկու տղա իրար հետ կովում են. գնաց, մոտացավ, ասեց.

— Ա՛յ որդի, խի՞ եք կովում:

Ասեց.— էս քարը ջրի միջիցն ենք գթե, կովում ենք. ես ասում ձե՛մ՝ իմն ա, էն ասըմ ա՛ իմն ա:

Ասեց.— Բերե՛ք, տենամ էդ քարը:— Քարը տվին ըզրան:

Ասեց.— Յավա՛ջ, մի պոպոկ քե տամ, մի պոպոկ ըզրան. հըմի լավ էլավ:— էրեսիք ուրախացան:

էդ քարը դրեց ջեպը, էկավ տունը. տեհավ տանը մթանը նստել են, ճրագլիս էլ չկա տանը. էդ քարը հանեց ջեպիցը, գրեց պատուհանը, ճրագի պես լիս տվեց տան մեջ:

Ասեց.— Էս ի՞նչ լավ ա, մեզ ճրագ ա հազիր:

Հաց-մաց առավ, նստան, ուտում ին:

Աղբրտանցը՝ տղերին սկսեց խրատ տալը, ասեց.

— Մի ժամանակ մտներդ կգա՞, որ մեր գովաթր հրմենից շատ էր, մենք որ սկսեցինք ղալմաղալ անիլը, իրար հուճաթութուն որ արեցինք, իրար շլսեցինք՝ ընկանք էս օրը. հրմի ձեզանից խընդրում եմ՝ մեր բերնից ուշունց, ղալմաղալ, բան դու ա չգա, աստված էլ էն գովաթր մեզ կտա:

Ասեցին.— Մոնց որ ասես, կհնաղանդենք քեղ:

Էդ քաղաքի ղրաղը էկավ մի բաղրկյան վեր էկավ: Էդ բազըր-կյանը ղշերը տեհավ՝ ամենի ճրագը անցավ, էդ մեկի ճրագը շանցավ: Կիսր բացվեց, ասեց. «Ես պըտի էթամ էս տունը, տենամ ի՞նչ թավուր տուն ա»:

Գնաց, տեհավ՝ չորս պատն ա, զատ չկա, մի քար պատուհանում վառվում ա, ասեց.

— Աղբե՛ր, էս քարը չե՞ք ծախի:

Ասեց.— Չէ՛, ծախենք ինչ անենք, մենք ճրագլիս չունենք:

Ասեց.— Էնդար փող կտամ, ճրագլիս էլ կառնեք, ամեն բան էլ կառնեք:

Ասեց.— Ինչ պըտի տաս, որ ծախեմ:

Ասեց.— Հաղար մանեթ կտամ, որ ծախես:

Էզ մարդ իմացավ՝ բազրկյան ըղրա վրա ծիծաղում ա, ասեց.

— Իմ վրա ծիծաղում ես:— Բազրկյանը իմացավ որ քիչ ա սուլիս, ընդրան ասում ա. «Իմ վրա ծիծաղո՞ւմ ես»:

Ասեց.— Երկու հազար մանեթ կտամ:

— Իմ վրա մի ծիծաղի:

Ասեց.— Խի՞ եմ ծիծաղում, երեք հաղար մանեթ կտամ: Վերջը շատ խոսալ չըմ գիտա, հինգ հաղար մանեթ կտամ, տո՛ւր, ես էթում եմ:

Ասեց.— Տո՛ւր:

Հանեց հինգ հաղար մանեթ տվեց, ասեց.

— Ա՛յ մարդ, դու ինձ շատ դիր էկար, լավ մարդ ես էրեում, մի բան ասեմ, ինձ կըլսե՞ս:

Ասեց.— Ասա՛, տենանք:

Ասեց.— Ես, դու աղբերանանք, պայման տանք, պայման առնենք. ես մեռա թեզ՝ իմ մալը քեզ, դու մեռար՝ քու մալը ինձ:

Բազրկյանը առավ քարն ու գնաց:
էդ մարդ վե կացավ, հինգ հազար մանեթի ապրանք առավ՝
իրա սելը, տավարը, լցրեց տանը:

Բազրկյանն էլ վե կացավ, գնաց, պըտըտեց էրկու տարի, քարը
ծախեց վացցուն հազար մանեթի: էկավ էդ քաղաքի գրաւը վե
էկավ, ասեց.

— էթամ, էն մարդուն ասեմ. «Քու քարը վացցուն հազար մա-
նեթի ծախեցիք». որ էն մարդի սիրտը սլատուի, մեռնի. էն փարենն
էլ մնա ինձ:

էկավ, մտավ տուն.— Հը՛, աղբեր, մո՞նց ես,— ասեց:

Ասեց.— Փա՞ռք աստըծու, ամեն բանս ղղվեր ա:

— Բա քու էն տլած քարը շասեցիր, ընչի՞ ես ծախեր:

Ասեց.— Ընչի՞ ես ծախե:

Ասեց.— Վացցուն հազար մանեթի:

Ասեց.— Ը՛, քու տունը չքանդվի, ես էն էրկու պոպոկի էի առե:

Բազրկյանը էրկու ձեռքով իրան գլխուն տվեց. «Վացցուն հա-
զար մանեթի բանն էլ էրկու պոպոկի առնեն», ասեց, ու սիրտը
ճաքվեց, մեռավ:

էս մարդը, մոնց որ պայման են գրե, վեր կացավ, գնաց ընդրա
ապրանքն էլ քաղաքի դրաղիցը բերեց, լցրեց իրա տունը:

Առաջվա դովաթիցը տահա շատ էլավ:

